ընդունէին զի բարձցէ տաճիկ, այլ ի ճանապարհին հայ մի գտեալ, բերեալ զնա ի մէջ իւրեանց՝ ետուն ի ձեռս նորա զի երթիցէ առաջի նոցա. և բարձեալ էր զնա ի ձողն բարձրացուցեալ, և երթային զօրքն զկնի և մեծամեծքն ձիով, և այնպիսի բերեալ ի սահմանս Էթմէյտանի եւ զձողն տնկեցին ի վերայ աղբիւսի և հանգեան երեկոյիս, անդ օթեալ[1] զգիշերս։ Եւ յամբոխէն ձայն արձակել ետուն թէ Զմուրա՛ն վէզիր կամիմք. և ետ թագաւորն մօհ[րն] վէզիրութեան Մուրատին. և զքէհեայէկութիւնն Քէչէճիօղլուն ետուն, և զմուֆտիութիւնն՝ Հիւսէմզատէին, և զղափուտանութիւնն՝ Տէլլէք Մուստաֆա փաշային, և զպաշչաուշչութիւնն՝ (պաբաղ), և զմեծ էֆէնտութիւնն՝ (պաբաղ). և զհին մուֆտին և զորդին աքսորեցին։ Եւ որք կային պատուականք վէզիրին, յայնմ օրէ որ ձայնն ել բանին, ամենեքեան փախստեայք եղեն։

Դշի օրս (2 Մայիս) գեռ ևս զինուք ի շուրջ գային և բազում չարութիւնս գործեցին յամենայն տեղիս, ոմանց զվերարկուս առնելով և ոմանց զքսակն և ոմանց զգլխոյ գօտին, զի և մեք ոչ կարացաք նստել ի խանութ յաւուրս յայսոսիկ՝ ոչ հայ և ոչ տաճիկ։

Ապա օրս եշիս (3 Մայիս) բացին զխանութս եւ զպէզէստանս. և օրս ի Ղալաթա ճէպէճի պաշուն տունն կոխեցին գունդ մի ի զօրացն գումարելոց։

Կիրակի Զ-ի. Սուրբ Նիկողայոսու Տէր Նիկողոսն վաղջանեցաւ, և օրս Ոհան եպիսկոպոսն եկն յԻտրէնու։

Դշի օրս (8 Մայիս) Շէխ Վէլի էֆէնտին սատկաւ և մին պատճառն սա էր սպանման Իփշիրին։

ԺԴ-իս Կիրակի. Երեման Սուրբ Խաչ։ Օրս ելեալ գնացի մօտ առ Առաջնորդն ի Պէշիքտաշն և իշխանքն

1) օդեալ.